

ԳՈԿՏ · ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

## ԼԷՕՆ ԻՐԻԵՆ ԳԱՍՄԱԳԻՐ

Լէօն չէ պատկանում այն պատմադիրների շարքին, որոնց նը-  
պատակն է մէկ անգամ գոյութիւն ունեցած պատմական դէպքերը,  
իրբեւ ալբալիսին, ալսինքն՝ իրբեւ եղակի դէպք, արձանագրել որ-  
պէս ստարկայական ճշմարտութիւն: Նրա համար մեծ նշանակու-  
թիւն ունի պատմական դէպքի պատճառներին իրազեկ լինելը, դը-  
րանց վերլուծութիւնն ու առաջադրած հետեւանքները: Նա դատող,  
պատճառի եւ հետեւանքի վրա խորհրդածող, որոշ դադափարներով  
հանդէս եկող եւ իրականութիւնը ընդգրկել ջանացող պատմիչ է:  
Այն ինչ որ Լէօն Ստ. Նազարեանցին է վերագրում, գործագրում է  
նաեւ իր երկերում: Լէօն նկատում է որ Ս. Նազարեանցը «բաւա-  
կան չէր համարում տալ չոր ու ցամաք պատմութիւն, ալսինքն՝  
դէպքերի ու դէմքերի նկարագրութիւն: Նա դնում էր քննական հա-  
յեացք, վերլուծում էր անցեալի հանդամանքները եւ լուսարանում  
էր նրանց որոշ դադափարների եւ հայեացքների տեսակէտից»:

Թէ Լէօն այս առաջադրութիւնը ինչքան յաջող է կատարում,  
ալբ յետոյ կը տեսնենք, իսկ առայժմ պէտք է նկատել մի բնորոշ  
դիժ, որ յատուկ է նրա բոլոր աշխատութիւններին: Նրա հայկա-  
կան տպագրութեան առթիւ նկատողութիւն է արւել, որ գրքի բո-  
ւանդակութիւնը չէ համապատասխանում վերնագրին:\*) Այս առ-  
թիւ Լէօն մատնանչելով, որ «կեանքը եւ գրականութիւնը չի կա-  
րելի բաժանել իրարից», պարտաւորութիւն է համարում «որքան  
կարելի է շատ լուսարանել կեանքը, մանրամասն խօսել նրա վրա  
ազդեցութիւն թողած երեւոյթների մասին, որպէսզի աւելի պարզ  
կերպով պատկերացնեմ մեր առաջադրութեան հանդամանքները»:  
Սա է եղել Լէօնի ծրագրերը: Բայց նրան առարկում են թէ «դա գիտա-  
կան ձեւ չէ»: «Թո՛ղ ալբալէս էլ լինի - պատասխանում է նա, ես

\*) Լէօ, «Հայկական Տպագրութիւն», ա. հատքը, 1904թ., Թիֆլիս:—

միտք էլ չեմ ունեցել տալ մի գիտական աշխատութիւն, եթէ այդպիսի աշխատութեան հիմնական յատկութիւնը պիտի լինի չոր ու ցամաք պատմւածք, եթէ գիտնականութեան համար պէտք է փակուելու ընտրւած ճիւղի սահմաններում, ենթադրելով թէ ընթերցողը մնացածը գիտէ: Ո՛չ, մեր ժողովուրդը ոչինչ չգիտէ իր անցեալի մասին: Իմ ուժերս ներածի չափ օգնելու նրան մի մատչելի, կենդանի կերպով պատմւած փորձով - այս է իմ ամբողջ ձգտումը»:

Թէպէտեւ այս մեկնաբանութիւնը յատկապէս վերաբերում է նրա «Հայկական Տպագրութեան», բայց իրօք դա բնութագրում է ընդհանրապէս պատմադրող Լէօն: Վերոյիշեալ պատճառարանութեան այն մասը, թէ հեղինակը կեանքը եւ գրականութիւնը չէ բաժանում իրարից եւ այդ պատճառով իրեն թոյլ է տալիս մանրամասն անդրադառնալու կեանքի վրա արդեցութիւն ունեցող երեւոյթներին, ի հարկէ, չէ արգարացնում այն աւելորդարանութիւնները, որոնցով, զժրախտարար, խճողւած են Լէօնի երկերը: Օրինակ. «Ս. Մեսրոպ» գրքում նա փոխանակ անմիջապէս գործին գիմելու, սկստում է պատմութիւնը «ուրարտեան կամ նախահայեր կոչւած ցեղեր»-ից. ապա նկարագրելով, որ ուրարտական երկրներում երեւան է դալիս մի նոր ազգ՝ հայերը, խօսում է Ասորեստ. Մարաստ. Պարսկաստանի, Աղեքսանդր Մակեդոնացու, ապա պարթեաների եւ հռոմայեցոց մէջ տեղի ունեցած պատերազմների մասին: Պէտք է ի նրկատի ունենալ, որ ամբողջ գիրքը բաղկացած է 334 փոքր կ'ջերից, որոնցից յատկապէս Ս. Մեսրոպին, այսինքն բուն նիւթին, նւիրւած է միայն 86 էջ (145-231):

Նոյնը տեսնում ենք եւ «Հայկական Տպագրութեան» Բ. հատորում 610 փոքրագիր կ'ջերից բաղկացած գրքի մէկ երրորդը (222-415) նւիրւած է սպարթութեան հետ կապ չունեցող խնդիրների՝ Իսրայէլ Օրուն, Մինաս վարդ -ի գործունէութեան, Պետրոս Մեծի քաղաքականութեան, Դաւիթ-Բէկի շարժումներին:

Իւրաքանչիւր գրական երկ, բովանդակութեան տեսակէտից պէտք է համաչափութիւն ներկայացնէ եւ անպայման պէտք է «փակուել ընտրւած ճիւղի սահմաններում», այլապէս այդ գործը վրէպած պէտք է համարել իր նպատակից: Անշուշտ, կեանքի բոլոր երեւոյթները, ինչպէս եւ առհասարակ մշակոյթի զանազան բնագաւառները միմեանց հետ կապւած են եւ միմեանց վրա շատ թէ քիչ ազդում են, բայց դա ամենեւին բաւարար պատճառ չէ, որ մի մասնակի խնդրի ուսումնասիրութեան ժամանակ, բուն նիւթը մի կողմ թողած՝ ընդարձակւենք անտեղի կեցողով ոչ խստորէն անհրաժեշտութիւն ներկայացնող յարակից խնդիրների վրա: Այս եղանակով

մշակոյթի ոչ մի տասնձին բնագաւառ լրջօրէն չի կարող ուսումնասիրել :

Որեւէ անձնաւորութիւն բնութագրելու համար ամենից ճիշտ եղանակն է որոշել նրա անհատական տիպը, որը դուստաւորում է նրա բոլոր ստեղծագործութիւնները : Լէօն կոչումով հրապարակախօս է և պատահական նիւթերի շարագրման ժամանակ այդ երեւոյթը ամենից ցայտուն կերպով հանդէս է գալիս : Այն ձեւը, որ ընդունում են նրա գրեւածքները, ոչ թէ կտրուկ, սեւեռած, չափած ու ձեւած բնոյթ ունէ, այլ հրապարակախօսական գրեւածքների պէս զեղուն, ընդարձակ, յաճախ կրկնող տիպի արտայայտութիւններից է բաղկացած : Շատ անգամ նոյնիսկ, թւում է, թէ Լէօն արժէք չէ տւել և՛ որեւէ ճիգ ու ջանք չէ թափել, բաւ կարելույն խնամեւած արտայայտութիւններով հանդէս գալ, այնպէս որ գրեւածքը չի տարբերում ամենօրեայ լրագրի յօդածններից : Ահա նման արտայայտութեան մի օրինակ . «Կրօնական խնդիրները Զօւղայից թոչում են Կ. Պօլիս, այստեղ տակնուկրա են անում հայերին և «ճերձուածող ու ուղղափառ», «հայ և ֆրանկ» անունները հրապարակ են նետում լուսաւորչական և կաթոլիկ հայերին բաժան-բաժան անելու, խառնելու, թշնամացնելու համար : Կ. Պօլսում առաջին անգամն էր, որ հայը առում էր թէ ինքը հայ չէ, այլ ֆրանկ . բայց այդ ախուր հանդամանքը վաղուց էր յայտնի Հայաստանում, զի ունիթորների ժամանակից : Եւ դա բնական էր մի ազգի համար, որ խփապէս վաղուց էր դադրել ազդ լինելուց, որ բաւական լայն մտքով, վաղուց էր դարձել մի կրօնական համայնք, գտնելով կրօնաւորի խնամակալութեան տակ, մինչև ոսկորների ծուծը տողորելով վանական դադափարներով և կորցնելով հայրենիքի շահերի հասկացողութիւնը : Այսպիսի ազգի մէջ կրօնը ազդութեան դադափարից բաժնել չէր կարող և՛ անհնարին պիտի լինէր դարգացնել այն միտքը, թէ հայը, կաթոլիկութիւն ընդունելով, շարունակում է մնալ հայ : Պատճառն այն էր, որ չկար աշխարհական աւելի լայն ու համբերող կրթութիւն :» («Հայկական Տպագրութիւն», ա. հատոր, եր. 373) :

Ոճի հրապարակախօսական բնոյթը այն հետեւանքն է ունենում, որ դուք վարակւում էք նրա մտածողութեան բնթացքից և ուրեմն սառը դիտող չէք մնում դէպի պատահական նիւթը : Պէտք է սակայն աւելացնել, որ Լէօն շարագրութեան բնթացքում, բարեբախտաբար, որոշ կաղապարներ գոյութիւն չունեն, որոնց մէջ բռնադրօսիկ կերպով մտցւելը պատմական իրականութիւն . նրա պատմելուց յետոյ դուք ի վիճակի էք նիւթից անհատական եզրակացութիւններ հանել : Լէօն տիպը թոյլ չի տալիս առարկայօրէն մօտենալու նիւ-

թին. ամէն տեղ նրա անձը ներկայ է եւ զգալ է տալիս իրեն, թէ-  
պէտ, ըստ Լէօի, պատմութիւնը գործ ունի եղած փաստերի հետ,  
«կարող է նրանց էութիւնը բացատրել, նրանց ընթացքը լուսաբա-  
նել»: Մարդու պատմութիւնը քաղաքակրթութեան պատմութիւնն է:  
Իրական պատմութեան առարկան մարդկային քաղաքակրթութիւնն  
է եւ «իսկական պատմութիւնը այն է, որ հիմնւած է գրաւոր յիշա-  
տակարանների վրա»: Ոչ մի պատմութիւն կատարեալ չի կարող լինել,  
«եթէ նրա մէջ բացակայում են ներքին հանդամանքները, եթէ պատ-  
մութիւն ստեղծող ժողովուրդը չկայ մէջ տեղ»: Լէօն յատկապէս իւր  
հայոց պատմութեան մէջ աշխատում է մշակոյթի բոլոր կողմերի  
վրա ուշադրութիւն դարձնել եւ որոշել հայ քաղաքակրթութեան  
դերը, համեմատելով այլ քաղաքակրթութիւնների հետ: Մինչեւ  
քրիստոնէութիւն ընդունելը հայութիւնը պատկանելիս է եղել ա-  
սիական քաղաքակրթութիւններին, իսկ յետոյ, դարձել է զէպի եւ-  
րոպական քաղաքակրթութիւնը: Հասկանալի է որ 19-րդ դարու վեր-  
ջում եւ քսաներորդ դարու սկզբում ստեղծագործող, այն էլ ազա-  
տամիտ մի անձի մօտ ուսումնասիրելիք երեւոյթները պիտի բացա-  
տրեն բանապաշտ կերպով: Այսպէս արտայայտելով Ս. Մեսրոպի  
գործի մասին, Լէօն աւելացնում է «հրաշքները վաղուց են փնտրւած  
մեր աշխարհից. այսօր ամէն ինչ պիտի բացատրել բանականութեան  
տեսակէտից, պէտք է նայել ամէն մի մեծագործութեան վրա ինչ-  
պէս մարդկային աշխատանքի վրա, որ ամէն ժամանակ եւ ամէն  
տեղ կատարել է բնական հանդամանքների, սովորական միջոյցով  
մէջ»: Գիտութիւնը ամէն մի մեծագործութեան հեղինակի մէջ «աշ-  
խատում է տեսնել մարդ, ժամանակի, միջոյցովի, հանդամանքների  
արդիւնք, արտայայտութիւն ներկայացնող մարդ»:

Լէօի պատմական աշխարհահայեացքի համար բնորոշ է, որ  
մարդկութեան կեանքի մէջ չկան յանկարծական թոխչքներ, «ազդե-  
րը բարձրանում են աստիճաններով»: Երեւոյթները ազդերի կեան-  
քում պատրաստում են երկար ժամանակ, «նոյնիսկ անկումն էլ  
ժամանակ է պահանջում, որպէս զի բնականուր, վերջնական երե-  
ւոյթ դառնայ»: Առաջադիմութեան, վերածնութեան գործը ծնւում  
է ոչ թէ մի բոպէի մէջ «այլ սերունդների յամառ աշխատանքով»:  
Այս համաշարհային օրէնքը «առաւել մեղ պէս մի խեղճ, անօգնա-  
կան, դարերով թշուառութիւնների մրուրը քամած ազգի համար  
պիտի լինի անողոք. խիստ ու կոշտ»: Սակայն, պէտք է դիտել, որ  
վերածնութիւնը, այս աշխարհահայեացքի տեսակէտից, ոչ մի տեղ,  
ոչ մի ազգի մէջ, հեշտութեամբ չի կատարւում «առանց ծանր մա-  
քառումների, առանց այն կատաղի կուլի, որ հինը յայտարարում է

նորին՝ նախ քան իր խորտակելը»։ Բայց այս ձեւով առաջացած իւրաքանչիւր հիմնարկութիւն էլ, որքան եւ գեղեցիկ լինի իր հու-  
թեամբ, «չէ կարող բաւարար համարել եթէ անշարժանայ եւ չկա-  
տարեյապօրժւի ժամանակի պահանջի համաձայն»։ Իսկ առաջադի-  
մութիւնը տեղի է ունենում այնտեղ, ուր ազատութիւն գոյութիւն  
ունի։ Ազատութեան դադարւարը, ըստ Լէօնի, անկասկած մարդու  
ամենասուրբ, ամենարարձր դադարւարն է եւ «այդպիսի դադարւա-  
րին կարող է ծառայել սուրբ, մաքուր մարդը»։

Իբրեւ աշակերտ Գր. Արծրունու եւ մշակական կուսակցութեան  
անդամ, ապա նրա կենտրոնում երկար ժամանակ գործող մի անձն,  
ընկան է որ Լէօն սուրբաբար պիտի լինէր այն բոլոր ազատամիտ  
ձգտումներով, որոնց դրօշակակիրն էր Արծրունին եւ «Մշակ»-ը։  
Յայտնի է, որ մշակական եւ մեղուական պայքարները գլխաւոր  
ինդիւրները մէկը եկեղեցու բարենորոգութեան հարցն էր։ Եթէ ի  
նկատի ունենանք այն հանդամանքը, որ կրօնական եւ եկեղեցական  
ինդիւրները մարդու հոգեկան ներքին կեանքի հետ սերտ աւրնչու-  
թիւն են ունեցել, ապա հասկնալի կը լինի այն սուր պայքարները,  
որ այս հողի վրա ծագեցին մեր կեանքում։ Հայ կղերի սնտոխապաշ-  
տութիւնը, սպիտութիւնը, փառամոլութիւնը ամէն կերպ հարաւ-  
ուում էին այս պայքարի ընթացքում։ Սկզբունքով Լէօն համարում  
է կուսակրօն հոգեւորականութիւնը մի «անբնական երեւոյթ» կեան-  
քի մէջ «իրբեւ ընական օրէնքների մի միտիքական աղճատում»։  
Մշակական ուղղութեան, իսկ նրանից էլ առաջ «Հիւսիսափայլ»-ի  
համար անհերքելի փաստ էր, որ ազգութեան դադարւարը վեր է յա-  
րանանութիւններից (բողոքական, լուսաւորչական, կաթոլիկ)։  
Կարելի է լաւ հայ լինել, առանց անպատճառ հայ լուսաւորչական  
եկեղեցուն պատկանելու։ Եւ ահա այս բարձր ըմբռնման, այն է՝  
ազգային միութեան, այլեւ հանրամարդկային առաջընթացութեան տե-  
սակէտից դիտելով այդ դաւանական պայքարները, հալածանքները  
ազիտութեան արդիւնք են համարում։

Չուտ դաւանական հողի վրա հիմնած դրականութիւնը մերժը-  
ւում է Լէօնի կողմից, իբրեւ աշխարհիկ ձգտումների հակառակ մի  
երեւոյթ։ Այստեղից է առաջ գալիս, օրինակ, հակառակութիւնը  
Միխիթարեանների այնքան բեղուն, թէպէտեւ խիստ գունաւորւած  
գործունէութեան դէմ։ Եւ շտեղծով վիճակի կեանքի միաբանութեան ա-  
ռանձնացումը, Լէօն աւերացնում է. «մանքը դառնում էր մի միջա-  
վայր, ուր ոչնչացւած էր անհատական կամքը, ազատութիւնը, ուր  
ամէն ինչ պիտի հպատակէր սահմանւած կարգերին եւ աւանդու-  
թիւններին։ Այդ է պատճառը, որ Միխիթարեանների դարաւոր գոր-

ծունէութեան մէջ աչքի է զարնում նեղ միակողմանիութիւնը, ազատ ու անկախ մտքի բացակայութիւնը»: Այս տեսակէտից դիտելով, խստօրէն քննադատում է Մխիթարեանների դրական գործունէութիւնը, որը փոխանակ 18-րդ լուսաւորեալ դարու բարիքները, վերլուծող քննադատութեան եւ բանականութեան լոյսը հասցնելու հայութեան՝ «միջնադարեան սխոլաստիկ աստաժարանների» փիլիսոփայութիւններն էր տալիս ազգին: Յետագէ՛մ պահպանողականութեան մի նշան էր կրում Մխիթարեան միաբանութիւնը նրանով, որ իւր դրական գործունէութեան համար նա գործիք ընտրեց ոչ թէ ժողովրդի լեզուն, այլ անհասկանալի մեռած դրաբառը»: Աշխարհիկ լեզուի հարցը սկզբունքային նշանակութիւն ունի Լէօի համար, որ կարծում է, թէ մի ազգի դրական առաջադիմութիւնը կախած է նրանից, թէ որքան այդ ազգը շուտ է լմբոնում, թէ «հին, անգործնական, մեռած լեզուի տեղ պիտի հաստատուի նորը, կենդանին, ժողովրդականը»: Համարելով լոկ կրօնական Փանատիկոսութեան եւ խաւար հոգու արգասիք այն երեւոյթը, որ Եւրոպատադրում – թարգմանում, գրում, Լէօն միաժամանակ պատիւ է հատադրում – թարգմանում, գրում Լէօն միաժամանակ պատիւ է համարում Ռսկան վարդապետի համար, որ նա թոյլ տւեց էջմիածնի տպարանում տպել կաթոլիկ գրւածքներ:

Փաստ է, որ մշակական ուղղութեան ղեկավարի՝ Գր. Արքրունու դպրոցում համամարդկային եղբայրակցութեան դադափարը իբրեւ այդպիսին անկախ այն իրական միջոցներից, որոնցով այդ դադափարը պիտի իրականութիւն դառնար–դուրբուրանքի առարկայ էր: Այս տեսակէտից Լէօն նկատում է, որ «եթէ աշխարհ շատ Գլադստոններ տւած լինէր, եթէ ազգերի յարարերութիւնները բխէին համամարդկային եղբայրակցութեան սկզբունքից, միջազգային միջնորդ դատարանը վաղուց բռնած կը լինէր թնդանօթների տեղը: Բայց Գլադստոն մի հատ էր, իսկ մի հատ ծաղկով, ինչպէս յայտնի է, դարուն չի լինի»:

Իբրեւ պատմագրող Լէօն ունի մի շարք հիմնական հայեացքներ, որոնք յաճախ կրկնում են զանազան երկերի մէջ եւ ըստ այնմ յարուցւած խնդիրների լուսարանութեան նպաստում: Նման հիմնական հայեացքներիցն է պատմութեան վաղեմի ժամանակներից սկզբած արեւմուտքի եւ արեւելքի պայքարը: «Այստեղ Յունաստանում Եւրոպան էր. այնտեղ Ասորեստանում՝ Ասիան: Երկու անուններ, որոնք միայն աշխարհագրական միտք չունեն, դրանք երկու ոգիներ են, երկու սկզբունքներ, միմեանց հակառակ, միմեանց բացասող, միմեանց հետ անհաշտ»: Այս երկու ոգիները միմեանց դէմ զինւե-

յին: Սկսում է պայքարը Եւրոպայի եւ Ասիայի մէջ, արեւելքի եւ արեւմուտքի, «արիւնոտ պայքար, որ տանջանքների ու սոսկալի յնցումների մի անվերջ շղթայ դառնալով, տեւեց այն ժամանակներից մինչեւ մեր օրերը եւ դեռ լուծում չէ ստացել: Սկսեց արեւելեան հարցը»:\*) Սա ուրեմն երկու սկզբունքների տիրապետութեան հարցն է. «Մի կողմից կուլտուրա, քաղաքակրթութիւն, ազատութիւն, միւս կողմից՝ բռնակալութիւն, անչարժութիւն, ստրկութիւն»: Յունա - պարսկական կռիւներում հանդէս է դալիս ասիականութեան ներկայացուցչի պայքարը հպատակութեան, ազատ ոգու դէմ, որի վախճանում ազատ ոգին, ժողովրդական ռամկավարական սկզբունքը, յաղթող է հանդէս դալիս»:\*\*) Արեւելեան բռնակալութիւնը երբեք չէ զարգացրել հայրենիքի զազախարը, այլ միշտ այն դաւանանքի մէջ է ամփոփւած եղել, թէ «պետութիւնը թագաւորն է, թէ այդ թագաւորի անձը միայն պիտի տեսնել եւ նրան միայն երկրպագել»: Եւրոպականութեան ամենազլխաւոր հիմքը,

\*) Արեւելեան հարց ասելով Լէօն հասկանում է քրիստոնեաների ազատութեան հարցը:

\*\*) Լէօն տալիս է ասիականութեան եւ եւրոպականութեան պայքարի պատմական ծագումն այսպէս: Ամենահին եւ անեմամեծ փաղափարքութիւնը սկիզբն է առնում Եփրատ - Տիգրիսեան գետնահովիտներում: Այս փաղափարքութիւնը արեւելեան, ինչպէս նաեւ ասիական է կոչուում: Եգիպտոսը հին ժամանակներում Ասիայի մի մասն էր համարում: Ուրեմն «ասիական ասելով հասկացում է Մերձաւոր Արեւելք, այն է Քաղդէայի եւ Եգիպտոսի փաղափարքութիւն»: Միջերկրականի արեւելում ծնում է մի նոր փաղափարքութիւն, եւրոպականը, որի հայրենիքը Յունաստանն էր: Այս եւրոպական փաղափարքութիւնը ասիականի հակադրութիւնն էր: Ասիական կամ արեւելեան փաղափարքութիւնը իւր մէջ ունէր մի գլխաւոր զազախար - բռնապետութիւն, որի հետեւանքն էր անհատական եւ համայնական ազատութեան բացակայութիւնը: Քաղաքակրթութիւնը պատկանում էր փոքրաքիւ մարդկանց, իսկ ժողովրդի մեծամասնութիւնը հարստահարում էր այդ փոքրամասնութեան կողմից: Ասիայում տիրող փաղափարկան ուժիւրը աստուածապետութիւնն էր: Քրմական դասակարգի ձեռնարկն էր «մտաւոր եւ նիւթական կուլտուրայի մենաշնորհը եւ հաղորդում էր ամբողջ փաղափարքութեան կղերական հանգամանք»: Եւրոպական փաղափարքութիւնը, ընդհակառակը, անհատական եւ հասարակական ազատութիւնն էր վեր հանում եւ բռնակալութեան հակադրում էր ռամկավարական սկզբունքը, ազատ զարգացող փաղափարքութիւնը: Յունական հետազոտող, վերլուծող համաքը, աշխարհիկ կուլտուրայի յարթանակն էր, հակառակ արեւելեան հասկացողութեան, որ ամէն ինչ հպատակեցնում էր իւր ստեղծած կրօններին: Յոյներին գործը շարունակում են հռովմայեցիք: («Հայոց Պատմութիւն», Ա. հատոր):

լստ Լէօի, եղել է խղճի եւ մտքի ազատութիւնը, իսկ արեւելեան բռնապետութեան մէջ «չի եղել եւ չսխալի լինի մտքի եւ խղճի ազատութիւն»։ Հայութիւնը ընդունելով քրիստոնէութիւնը \*) վերջ արեւեց «հին դարերի հայութեան, որ ասիականութեան մի հարազատ բեկորն էր, ապրում էր ասիական բռնապետութեան յատուկ բոլոր աւանդութիւններով, պաշտամունքներով եւ աշխարհահայեցողութիւններով»։ Գրիստոնէութիւնը երկար ժամանակ յամառ կռիւ մը ղեկով, կրթում է հայերին այն սկզբունքներով, որոնք եւրոպական քաղաքակրթութեան հիմքերն էին կազմում։ Կորցնելով պետական անկախութիւնը, հայութիւնը միայն եկեղեցական ինքնագոյութիւն է ձեռք բերում, որը տարիների ընթացքում կարողանում է պահպանել միայն ծանր, սարսափելի դճարերութիւններով։ Եւ դարեր տեւող այս դճարերութիւնը արւում էր մի պայքարի մէջ, որը մըղւում էր ընդդէմ ասիականութեան։ Հայոց հարցը իսկապէս հայութեան ազգային գոյութիւնը պահպանելու հարցն է, իսկ վերջին տարիների ըմբռնումով, իրօք դա հայութեան մահմտական տիրապետութիւնից ազատելու հարցն է։ Բնորոշ է Լէօի համար, որ մի ժամանակ, երբ նա դեռ վերջին տարիների դաւանափոխութեան չէր ենթարկուել, հարազատ էր իւր էութեան ու բռնադրօսիկ կերպով չէր ջանում անպատճառ օրւայ արժան պատմական տեսութեանց տուրք տալ, այն կարծիքին էր, որ «մի աղբ իր կենդանութեան համար համթուր պիտի ունենայ, համ դրիչ, այսինքն կորով եւ առաջադիմութիւն, Ֆիզիքական եւ մտաւոր ոյժ»։ Եւ թրքական լծի տակ գտնւած ու ստրկացած ազգերը չպէտք է անշարժ նստէին իրենց տեղը եւ սպասէին, թէ երբ խաչակիր զօրքեր կը դան ու իրանց կազատեն, այլ իրանք էլ պէտք է կուէին...։ Սա, ըստ Լէօի, մի անդառնալի վճիռ էր, որ «բխում էր մարդկային ցեղի պատմութեան ոգուց»։

Լէօի պատմութեան վերաբերմամբ ունեցած հայեացքի մէջ երկըրորդ հիմնական դադափարը այն է, որ առհասարակ երկրի աշխարհագրական դիրքը «ահագին դեր է խաղում ազգերի ճակատագրի մէջ»։ Ամէն մի անհատ իւր աշխարհագրական միջավայրի արդիւնք է։ Հազարաւոր տարիների ընթացքում երկիրը կազմակերպում է ոչ միայն անհատների, այլ եւ ժողովուրդների բնաւորութիւնը, ամբողջ հոգերանութիւնը։ «Երկիրն է, որ իր կլիմայական պայմաններով, իր աշխարհագրական դիրքով ճակատագիրն է ստեղծում ազգերի համար։ Արդ ճանաչել ստանց նրա երկիրը ճանաչելու

\*) Ըստ Լէօի, քրիստոնէութիւնը ազատութեան եւ հաւասարութեան համաշխարհային մի կրօն է (Հայկական Տպագրութիւն, Ա. հատոր, էր. 26)։

անհնարին է: Ինչո՞ւ է մարդը այս տնտեսական ձեւին հետեւում եւ ոչ թէ մի ուրիշ ձեւի, ինչու է նա այս վիճակի մէջ եւ ոչ թէ մի այլ, ինչու է նրա պատմութիւնը այսպէս ընթացել եւ ոչ թէ մի ուրիշ կերպ - այս բոլորին պատասխանում է հայրենիքը»: Անդրադատնալով մասնաւորապէս հայ աշխարհին՝ Լէօն նկատում է, որ Հայաստանը «տեղական առանձնակի շահերի հարստութիւն» և «ընդհանուր համայնական շահերի աղքատութիւն» է ներկայացնում:

Երկիրը մշակութային շերտաւորումների բազմազանութիւն է արտադրում: Իւր հովիտների եւ կիրճերի մէջ հարուստ բնութիւնը «թոյլ է տալիս բարձր աստիճանի կուլտուրա»: Այստեղ ազգաբնակչութիւնը նստակեաց է եւ կարիք ունի համախմբելու, ուժեղ կազմակերպութիւն ստեղծելու: Բայց նման տեղերը շատ չեն եւ ցրեւած են ու բաժնւած միմեանցից լեռներով: «Տիրապետողը, երկրին ընդհանուր գոյն տուողը, լեռնարօտների իրականութիւնն է, ուր կարող է զարգանալ հովւական, թափառիկ աստանդական կենցաղը: Իսկ հովւական կացութիւնը բոլորովին հակասում է հովիւների նրստակեցութեան իդէալներին: Նա ճանաչում է միայն անձնական ազատութիւն, անջատ անհատական շահեր, նա արհամարհում է քաղաքական եւ վարչական սահմանները, որովհետեւ նրա հօտերին հարկաւոր են ընդարձակ տարածութիւններ եւ նա իր շահերով կապւած չէ մի որեւէ յայտնի տեղի, յայտնի շրջանակի հետ»:\*) Այս է պատճառը, որ Հայաստանը տեղական անջատ շահերից չբարձրացաւ մինչեւ «ընդհանուր համայնական, ընդհանուր պետական շահերի մշտատեւ հասկացողութիւնը»: Նման երկիր չէր կարող ուժեղ կենտրոնացած պետութիւն կամ բռնապետութիւն ստեղծել:

Հայաստանը նաև մի այլ առանձնայատկութիւն էր ներկայացնում, որը խորապէս ազդել է նրա պատմութեան վրա: Ներկայացնելով մի միջավայր, «ուր մշտնջենապէս տեղի են ունենում միջազգային շարժումներ», Հայաստանի ճանապարհներով էին անցնում թէ՛ նւաճող բանակները, թէ՛ փոխադրւող ամբողջ ցեղեր եւ թէ՛ առեւտրական մեծ կարւաւաններ: Պէտք է նկատի ունենալ, որ նախապատմական հնութեան մէջ այս երեք շարժումները միատեսակ նշանակութիւն ունէին երկրի համար, «երեքն էլ արշաւանքներ էին՝ ոյժի, զէնքի վրա յեւած»: Այսպիսով Հայաստանը, մարդկային ազդի շարժումների ժամանակից, մի ոտնակոխ երկիր էր: Թշնամիների երիւարներ-

\*) Տես այս տեսակետից յատկապէս Սիւնիքի եւ Արցախի անմատչելի բարձրութիւնների եւ խորխորատների կլիմայական դաժան պայմանների ազդեցութիւնը ազգաբնակչութեան բնւորութեան վրա («Ս. Մեսրոպ, էջ 154-155):

րի սմբակները, որոնք մաշեցին հակական լեռներն ու բլուրները, «կազմում են այն առանցքը, որի շուրջը պտտւում է Հայաստանի ամբողջ պատմութիւնը»: Հայոց պատմութեան ամենանշանաւոր յատկութիւնը, ըստ Լէօի, այն է, որ նա «գերազանցօրէն պայծառ եղանակով է ներկայացւում մարդուն իբրեւ իր միջավայրի արտադրութիւն»: Այս օրէնքը համաշխարհային է եւ եթէ այդ օրէնքը դիտելու համար հարկաւոր են վաւերագրեր, «որոնք ապացուցանում են, թէ մարդու ճակատագիրն է լինել այն, ինչ նրան կարող են դարձնել նրա ոտի տակ հաստատուած հողը եւ նրա դիտակները տարածւած երկրները», - ապա այդ վաւերագրերից մէկը հէնց հայոց պատմութիւնն է: Նոյն երեւոյթը նկատելի է նաեւ հայկական դադութներում, ուր «հողն ու օդը առանձնապատուկ կնիք են դրոշմում դադթական հայութեան վրա»:

Թէպէտեւ Լէօն այն համոզմանն է, որ պատմութիւնը ժողովուրդներն են ստեղծում, եւ իւր հետազոտութիւնների մէջ խոշոր նշանակութիւն է յատկացնում ժողովրդական, հասարակական շարժումներին եւ դադափարներին, բայց չպէտք է մոռնալ, ասում է Լէօն, որ ժողովուրդների մէջ առաջնորդ հանդիսացող ուժեղ ու տաղանդաւոր անհատներն են այս կամ այն ընթացքը տալիս պատմութեան, հաղորդում են իրենց ժամանակին մի յայտնի հոգի, գոյն: Մատնանշելով Ներսէս Մեծի կողմից հաստատուած բարեգործական հաստատութիւնների վրա, որոնք քաղաքակրթական բնոյթ ունէին, Լէօն աւելացնում է, թէ դա ցոյց էր տալիս, որ «մի հատ մարդու անշէճ ու հսկայական եռանդը կարող է հրաշքեր գործել»: Մի այլ տեղ նկարագրելով 1832 թւականից Անգլիայում նոր ուղղութեան յաղթանակները, Լէօն ընդգծում է, որ այդ յաղթութիւնների հերոսը Գլադստոնն է: «Ձենք ասում թէ նա էր որ արաւ ամէն ինչ ո՛չ, անգլիական ազրը հանճարի պակասութիւն չէ զգացել եւ երեւի այսուհետեւ էլ չի զգայ: Բայց որ առանց Գլադստոնի շատ եւ շատ րան չէր գլուխ գայ այդ կարճ ժամանակամիջոցում՝ դա անուրանալի է»: Միայն իւր գրական գործունէութեան մայրամտին, երբ հայ երկրում տիրականօրէն իշխում էր երեւոյթների դանդաճային ըմբռնումը, որով անհատներին ոչ մի գործօն դեր չէ ընծայում պատմական իրականութեան մէջ, Լէօն տուրք տալով օրւայ պահանջին՝\*) նկատում է, որ իւր ժամանակի սերնդի «արածները անհատներինը չեն, այլ ժամանակինը, սերնդինը»: Այստեղ թիւրիմացութիւնը նրանումն է, որ ժամանակի սերնդի դերը մատնանշե-

\*) «Անցեալից», 1925; Թիֆլիս, էջ 19:

լով, կարծէք ապարդիւն կերպով ժխտում է, որ այդ սերնդի մէջ զանազան անձինք զանազան կերպ կարող էին հակադրել հասարակական կեանքի կերպաւորման եւ ուղղութեան վրա :

Այժմ հետաքրքիր է տեսնել, թէ Լէօն ինչպէս է դիտում մշակութի աշխարհի մի բնագաւառ ինչպիսին է գրականութիւնը : «Գրական երկերը մարդկային ոգու պատմութեան վաւերաթղթերն են, ասում է նա : Նրանք պատմում են իրանց ժամանակի մասին, ցոյց են տալիս հասարակական հոսանքները, ոգեւորող գաղափարները, պարզում են այն աշխարհահայեցողութիւնները, որոնք մի յայտնի ժամանակամիջոցում տիրում են մտքերին . նրանք տրամաբերութիւնների հայելին են» : Այս պատճառով էլ գրականութեան հետեւողը պէտք է յաճախ «կանգ առնէ եւ նայէ ժողովրդի կեանքին, որոնք այդ կեանքի մէջ թէ յանկարծական երեւան եկող լուսաւոր առաջադիմութեան առիթներն ու դրդիչները, թէ մահացնող հանգամանքները» : Գրականութիւնը իբրեւ ժողովրդի «հոգու ու մտքի արտայայտութիւն» թարմանում է, կենսունակ է դառնում երբ «եռանդուն ու ոգեւորիչ է ինքը կեանքը, երբ իւր առջեւ բացւում են դեղեցիկ, յուսատու հեռանկարներ» : Այս առողջ տեսակէտներն ունենալով հանդերձ, Լէօն սակայն գրական երկերի վերաբերմամբ պահանջներ է առաջադրում, որոնք ամենեւին հոգեկան նրբութեան ապացոյցներ չեն եւ եթէ նրա այդ տեսակէտը որդեգրենք, քաղաքակրթական շատ բարիքներից պէտք է հրաժարենք : Նկարագրելով, որ ՅՕական թւականների սերունդը «պահանջում էր գործ, դրական գիտութիւն, աշխատանք հասարակաց բարիքի համար», «իդէալիստ» փոքրինչ հեզնական անունն էր տալիս այն մարդկանց, որոնք գաղափարներին երկրպագելն էին համարում առաջադիմութեան ամենալաւ միջոցը : «Իդէալիստը ուէալիստի հակապատկերն էր» : Ռէալիստը պահանջում էր մարդու գործունէութիւնից, տաղանդից, ընդունակութիւնից «անմիջական, իրական օգուտ» մինչդեռ «իդէալիստը հաւատում էր, որ միայն հացով չէ մարդ սպրում» :

Այս ընդհանուր դատողութիւններից անցնելով մեր իրականութեան՝ Լէօն դանդում է, որ մեր իրականութեան մէջ դեռ ոչ ոք գործնական ուէալիստի պահանջները չէր ներկայացրել ւ եւ ահա այդ անում է «Արծրունին եւ որքան սիրուն կերպով» : Թէ Արծրունին ուէալիստի տեսակէտներն ինչքան «սիրուն կերպով» է ներկայացնում տեսնում ենք արտայայտւած երկու տիպի գաղափարներից : Ահա իդէալիստի մտքերը . «Ես նկատում եմ բնութիւնը, որովհետեւ բնութիւնը դեղեցիկ է : Ամենագեղեցիկ բանի տեսարանը գոյացնում է մարդիս մէջ բարձր ու աղնիւ զգացմունք, գոյացնում է գեղեցիկի

ճաշակը եւ մաքրում է նրա սիրտը կոպտութիւնից, կոպիտ զգացմունքից»: Արծրունին, իբրեւ սէպիստ, պատասխանում է սրան, որ ժողովուրդը ժամանակ չունի եւ զարգացած չէ գեղեցիկ նկարչութիւնից «այդ ուսմունքը քաղել»: Ժողովրդին կոպտութիւնից ազատելու, նրա զգացմունքը մաքրելու համար հարկաւոր է նրա կեանքը փոխել, իսկ կեանքը փոխելու համար անհրաժեշտ է «աշխատանք եւ ուսում»: Թէ նման տեսակէտը իւր տրամաբանական եզրակացութիւնների մէջ ինչպիսի՞ անհեթեթութիւններ կարող է արտադրել, դրա համար անհրաժեշտ է լսել այն ցանկութիւնը, որ իբր թէ ժողովուրդը յանձինս սէպիստի արտայայտում է. «Նա կը կամենայի, որ ամէն բան օգնէր լաւանայլու, ձգտելու դէպի բարոյականութիւնը, դէպի իմ կեանքի լաւացումը, դէպի առաջադիմութիւն... իսկ այնպիսի նկարչութիւնները, որտեղ ներկայացւած է (թէպէտեւ եւրեւելի Ռաֆայէլի ձեռքով) գեղեցիկ կնոջ տկոյր մարմինը կամ բնութեան տեսարանը, սարեր, ձորեր ու ջուրը - սրանից ես խոստովանում եմ ձեզ, սրանից ես անտեսել բարոյական չեմ դժանդում»: Նւայտիսի ծայրայեղ գոհարի ըմբռնումը մշակութային արժէքների՝ Լէօի կողմից որակում է սէպիստի պահանջների «սիրուն կերպով» ներկայացնելը: Գեղարեւոտական ստեղծագործութեան մարդուն կրթող, դաստիարակող, վսեմացնող, ազնւացնող դերը - թէկուզ նա արտայայտուի «տկոյր կնոջ» կամ «սարեր, ձորեր, եւ ջուրը» պատկերացնելով - մի հարեւոյով ժխտում է, առանց գիտակցելու, որ դժանոյ մենք բարրարոսարար մարդկային մշակոյթի բաղմաթիւ անգին բարիքներից - արձանացած անմահ գեղարւստագէտների՝ ձեռքով - ձեռք պէտք է վերցնենք:

Թէ նման տիպի ըմբռնումը գրական - գեղարեւոտական խնդիրների վերաբերմամբ - միացած, ի հարկէ, այդ ըմբռնման Լէօի կուսակցական, մշակական կրքոտ կանխատրամադրութիւնները - ի՞նչ արգասիքներ կարող է տալ, դրա համար բաւական է լուր աչքի անցնել նրա «Ռուսահայոց Գրականութեան» մէջ ականաւոր գրական դէմքերի - Մուրացան, Շիրվանզադէ, Թումանեան, Փափաղեան - բնութագրումը: Որեւէ անկողմնակալ, անաչառ եւ գրական խնդիրներից հասկացողութիւն ունեցող անձն չի կարող մնայուն արժէք յատկացնել Լէօի անձնական կանխատրամադրութիւններով տողորւած այդ բնորոշումներին: Թէ «սէպիստը» իրապէս ինչպէս է նայում հայ գրական ստեղծագործութիւններին, դրա մի օրինակն է Լէօի վերաբերմունքը դէպի մի այնպիսի գեղեցիկ ստեղծագործութիւն, որպիսին է Յ. Թումանեանի «Անուշ»-ը: «Երկար ու ձիգ նկարագրութիւններ աջող ու անաջող աւելորդութիւններ, թուիչքներ դէ-

պի պատմական անցեալը, ժողովրդի վիճակ, ոգեւորութիւն, հրճուանք ու փառարանութիւններ: Դուք պարտաւորւած էք, դուք ամբողջովին լարւած էք՝ մի արտակարգ, մեծ, հսկայական բան տեսնելու: Բայց ի՞նչ է գալիս այդ բոլորից յետոյ: Մի հովիւ սիրահարւած է, գտնեմարտի մէջ յաղթում է իր սիրուհու հղբօրը եւ այդ պատճառով էլ սպանւում է նրանից»: Նման «նէալիստական» ակնոյցներով դիտելով, ամէն մի զրական - զեղարեւոտական ստեղծագործութիւն կարելի է դարձնել հասարակ եւ անարժէք:

Պատմութիւնը գրելու համար Լէօն հարկաւոր է համարում «բարեխիղճ, բարձրակողմանի ստումնասիրութիւն, պէտք է ազատ լինել կրքերից եւ նախապաշարձունքներից»: Դժբախտաբար վերին աստիճանի արգարացի պահանջը չի իրագործւած հէնց իւր՝ Լէօնի կողմից: Նրանից շատ հեռու է հուսկան այն անգործ վիճակը, որը հրահրուր է դարձնում սառն վերաբերմունքը դէպի իրականութիւնը եւ հեռու օրւայ այլիկութիւնից ու յոյսերից, մնայուն մտքերի ու գատողութիւնների արտայայտութիւնը: Զուրկ սխտեմատիկ կրթութիւնից, եւ իւր երիտասարդական տարիներում ենթարկելով Արծրունու գաղափարախօսութեան ուժեղ ազդեցութեան՝ նրա մտայնութիւնը կազապարւում է մշակականութեան մթնոլորտում: Հոգեբանօրէն գիտւած փաստ է, որ մեր երիտասարդ տարիների կուռքերը մեզ վրա իրենց ունեցած տիրական ազդեցութիւնը տարածում են նաեւ մեր աւելի հասուն տարիներում, եւ շատ դժւար է, գրեթէ անհնար է ձեռքադառնալ նրանց հօր տիրաւորութիւնից: Լէօն եւս Գ. Արծրունու գաղափարամբ նման վիճակումն է գտնւում: Գ. Արծրունու կեանքի իւրաքանչիւր դրւագլ, շատ աննշան բացառութիւններով, ասիթ է տալիս նրան ներքոյներ հիւսելու իւր ուսուցչի հոսցիին: Նա արդէն նախօրօք կանխատրամադրւած է դէպի վերջինի հերոսական գործունէութիւնը, «որի առջեւ կարելի է միայն խոնարհուել, ծունկ դնել»: Հասկանալի է, որ նման պարագային Գ. Արծրունու հարազատ ամբողջական տիպը չի կարող մեր առաջ պատկերացել, այլ միայն միակողմանի ջատագովութիւն: Այսպէս Լէօն նկատում է, որ Արծրունին «կարող է ուշ լինել» յօդւածում մասնանշել է ապագայում սպաննացող պրոլետարիատի դոյութիւնը մեղանկում, երբ խոշոր արդիւնաբերութիւնը կարող է ստրկացնել մոնը պրոլետարիատիներին եւ այսպիսով պրոլետարիատի բանակը մեծացնել: Ուրեմն ժամանակ է ձեռք աննել այնպիսի միջոցներ, որոնք կազառնեն մեզ պրոլետարիատի սպաննացող շարժումից: «Իրա համար հարկաւոր է պահպանել մանր արդիւնագործութիւնը»: Ուրեմն, ըստ այս տեսակէտի, անհրաժեշտ է, որ մենք «նպաստենք մա-

նըր արդիւնարեւութեան, ընդարձակելով նրա շրջանը եւ մանր արդիւնարեւորոյնների թիւը»։ Բայց ի՞նչպէս։ Դրա համար անհրաժեշտ է, որ գոյութիւն ունենայ «էժան, մասշէլի կրէպիտ»։ Սակայն միւս կողմից չքաւոր դասակարգին «արգելւած չէ՝ ձգտել դրամադրութիւ կազմելու եւ իրան ապահովելու։ Այստեղից ծնում է անտեսական այն դադափարը, որ հնար է տալիս աղքատ դասակարգին իր ալլոձգտումը իրագործելու։ Եւ այդ անտեսական դադափարը արդիւնաբերական, սպառման, խնայողական ընկերակցութիւններն են»։ Լէօն ինքն էլ աւելացնում է, թէ «մենք այստեղ չենք քննում թէ որքան գործնական էին «Մշակ»-ի այս դատողութիւններն ու ծրագրերը»։ Ուրեմն, ըստ Լէօնի, «Մշակ»-ը առաջարկում էր հէնց սկզբից կատարել այն խնդիրները, որ ապագային ցնցումներին, բարդութիւններին տեղ չմնայ։ Կարելւորն այն է, որ «Մշակ»-ը «անտեսական նոր կեանքի պահանջներին» արձագանք է տալիս, լուսարանում է ճանապարհները, ուղղութիւն տալիս, ապագան գուշակում։ Բայց եթէ աւարկայօրէն դիտենք, Գ. Արծրունին ի՞նչ բանական լուծումն է տալիս յարուցւած խնդիրներին եւ արդեօք Արծրունու պէս մէկից, որ Եւրոպայի անտեսական կեանքին ակնատես էր եղել եւ լաւ ծանօթ էր, չէ՞ր պահանջում աւելի խորունկ լմբոնումն իրականութեան եւ համապատասխան ուղղութեան ցուցադրումն։ Կամ մի՞թէ խնդիրների նման լուծումը հեղինակի մեծութեան ապացոյց է։

Այս Լէօն նկատում է, որ «Գ. Արծրունին համարեա ոչ մի դէպքում չէ կարողացել ստոն դատողի կերպարանքով մօտենալ իրեն գրադեցնող հարցերին։ Ադնիւ կիրք, կրակոտ թափ, ուղիղ կտրելու եւ անցնելու մի անփոփոխ ընթացք - ահա նրա հրատարակախօսական խառնւածքը»։ Ի հարկէ, անմիջապէս Լէօն հանդէս է գալիս իւր պաշտպանութեան տակ աննելու Արծրունուն, ասելով, «այսքան բարձր սաստիկացած «տէմպով» գործող գործիչի համար բնական պիտի համարել այն սաստիկ գրգռումը, ներվայնութիւնը, որ երբեմն երեւան էր գալիս, թուլացնելով մի լուրջ, համողած դադափարականի գրութիւնների ոյժը»։ Սրանով պէտք է բացատրել, որ Արծրունին, յատկապէս երիտասարդական տարիներում, «երբեմն գուրս էր գալիս վայելչութեան սահմաններից եւ դիմում էր ծայրայեղ արտայայտութիւններին»։ Ի հարկէ, ըստ Լէօնի, «մշակական կուլի մէջ գտնուող դիւտորին ներելի են սակաւաթիւ թոխչքներ դէպի միակողմանիութիւն եւ չափազանցութիւններ»։

Մի այլ անգամ Արծրունին այն կարծիքն է յայտնել, որ հայերը իբրեւ կուլտուրական աղք պիտի կլանեն իրենց հարեւան ո՛չ կուլտուրական ազգութիւններին (օր. ասորիներին եւ քրդերին) եւ

պիտի հայացնեն նրանց : Այլեւ Արծրունին պնդելիս է եղել, որ կովկասեան ազգերից ոչ մէկը հայերէնի պէս «մի կուլտուրական կենսունակ, զարգացման ընդունակ լեզու» չունի, ուրեմն եւ «հայերէնը պիտի առաջնակարգ ու բարձր լինի» : Եւ «Մշակ»-ի խմբագիրը խորհուրդ էր տալիս մահմեդականներին, թողնել արարական անյարմար տառերն ու գործածել հայերէն տառեր, որոնք ամէն յարմարութիւն ունեն նրանց լեզուն ճշտութեամբ եւ հեշտ կերպով արտայայտելու : Լէօն, ի հարկէ, այս բոլոր արտայայտած մտքերը «մոլորութիւններ» է համարում, բայց անմիջապէս մեղմացուցիչ պարագաներ է մատնանշում, ասելով թէ՛ «պէտք է նրանց համարել շեղումներ, որոնք անընտան հեն, եթէ ի նկատի ունենանք ժամանակը, նրա յուզումները, նրա սգեւորութիւնը : Ձի սխալում միայն նա, ով ոչինչ չի անում» :

Լէօն իւր պատմագրութեան ընթացքում ոչ միայն հանդէս չէ գալիս լիակատար անաչառութեամբ դէպի նկարագրուող կուսակից դէմքը, այլեւ անհասարակ չէ ցուցադրում այն անհրաժեշտ յարգանքը դէպի հակառակ կարծիք դաւանող անձինք, որոնք որեւէ ձեւով պայքարի մէջ հանդէս են գալիս իրրել հակառակ կողմ : Կարկառուն օրինակ տալիս է «Մուրճ»-ի խմբագիր Ա. Արասխանեանը : Ոչ մէկ կասկած, որ Ա. Արասխանեանը եւրոպական գիտութիւնը լիապէս իւրացրած, մարդւած, խորունկ մտածող եւ յատկապէս վերբուծող էր, այլեւ իրրել մարդ, շիտակ նկարագրի տէր անձ էր : Այս մարդը դժբախտութիւն է ունենում հրատարակելու «Մուրճ» ամսագրում (1889 թւի մ. 1) մի առաջնորդող («Մուրճ»-ը որպէս հասարակական օրգան»), ուր քննադատելով նաեւ «Մշակ»-ի ուղղութիւնը, նրա դրական եւ բացասական կողմերը, նկատում է, ի միջի այլոց, որ սկզբնական տարիներում փայլելուց յետոյ, «Մշակի անկման նշանները սկսեցին երեւան գալ իւր հրատարակախօսութեան սկզբից արդէն 4-5 տարի յետոյ» : Ի միջի այլոց, այդ առաջնորդողում, որ վրւած է բուսական սառն, Արասխանեանին յատուկ վերբուծող ոճով, «Մուրճ»-ի խմբագիրը ընդունում է Գր. Արծրունու բնաւորութեան անյողողողութիւնը, «միացած նրա ընդհանուր եւ բազմակողմանի զարգացման հետ» : Բայց եւ այն անկասկած էր Արասխանեանի համար, «որ այդ բնաւորութիւնը ոչ այն լայն բնաւորութիւնն էր, որ պահանջում է ժողովրդական առաջնորդութեան համար եւ ոչ էլ Արծրունու ընդհանուր եւ բազմակողմանի զարգացումը այն խորութիւնը ունի, որ պահանջում է ժողովրդական կարեւոր խնդիրները քննելու համար : Զարմանալի է որ այն մարդը, որ տաղանդ ցոյց տւեց ամէն բանից խնդիր շինելու, բոլորովին

դուրկ երեւաց ամէն ընդունակութիւնից խնդիրները ուղիղ գնելու եւ մանաւանդ նոցա քննադատելու»։ Արդ, ինչպէ՞ս էր Արծրունու վերաբերմունքը դէպի այս քննադատը։ Լէօն նկատում է, որ Արծրունին «առհասարակ քննադատելով Արասխանեանցի այդ յօդածը իր յատուկ համարձակութեամբ ասում էր թէ նոր խմբադիրը ստախօսութեան, խորամանկութեան, տգիտութեան բաւական պաշարով է դուրս եկել»։ Ապա Լէօն մի շատ բնորոշ յաւելում է անում Արծրունու այս անարդար որակումներին, ասելով, որ Արծրունին բանակրկներին մեծ նշանակութիւն էր տալիս որպէս «անհրաժեշտ միջոց»-ի ոչ միայն հասարակական հարցեր մշակելու, «այլեւ այդ հարցերի ասպարէզում գործողների դէմքերը, ուղղութիւնը, դաւանանքները պարզելու համար»։ Ամէն մի աննախապաշարած եւ անաչառ մտքի համար պարզ է, որ ներկայ դէպքում մենք գործ ունենք յանձնիս Արասխանեանի, ոչ ստախօսի, ո՛չ տգէտ մի անհատի հետ եւ ոչ իսկ այս եղանակով նրա դէմքը, ուղղութիւնն ու դաւանանքն է պարզում, այլ տեղի է ունենում լսիկ ընդդիմախօսի բարձր անձնաւորութեան անտեղի անուանարկութիւն։ Իսկ Լէօն կուսակցական մտայնութեամբ տողորած, դժբախտարար, չէ նկատում, թէ ինչպիսի մեծ յանցանք է առարկայական պատմաբանի համար, անհրաժեշտ յարգանքը չմատուցանել մի, թէկուզ, հակառակորդ անձի, որը հայկական իրականութեան կարկառուն, իմացական դէմքերից մէկն էր։

Վերեւում մատնանշեցինք, որ Լէօն կրքոտ հրապարակախօսական տիպի տէր անձն էր եւ նրա գրածքները աւելի առօրեայ մամուլի յօդածների բնոյթ են կրում, քան սառն կշռադատած, առարկայօրէն դիտած ու դատած մնայուն երկերի։ Այս գիծը ամենաուժեղ կերպով հանդէս է գալիս նրա վերջին երկի («Անցեալից») մէջ։ Լէօն իւր կեանքի մայրամտին կարիք է զգացել իւր ժամանակի սերնդի գործունէութիւնը, «նրա արասներն ու առաքինութիւնները», նրա «սխալները», «սճիրները» ներկայացնել։ Իր գրական գործունէութեան ամբողջ ընթացքում Լէօն հանդէս է եկել իբրեւ Գ. Արծրունու գաղափարներով տողորած ազատամիտ մի անձնաւորութիւն, որը պատմական եւ ներկայ իրականութեան մօտենում է արդէն նախկին մշակական մի կաղապարուած տիպի տեսակէտով։ Յանկարծ գտնելով մի բոլորովին նոր միջավայրում խորհրդայիննա անմիջապէս իւրացնում է տիրող իշխանութեան տեսակէտները եւ ըստայնմ դիրք բռնում դէպի բոլոր նախկին հասարակական արժէքները։ Ուրեմն, այստեղ գաղափարների երկարատեւ, աստիճանական դարգացման, ձեւափոխութեան մասին խօսք չէ կարող լինել,

այլ կեանքի նոր պայմանների ստեղծման տակ պատմագիրն իսկոյն ազատամտից դառնում է ծայրայեղ արմատական, որը ջանում է ամէն մի պատմական երեւոյթ զիտել նոր ակնոցներով :

Իր վերջին գրքի մէջ Լէօն երկու հիմնական գաղափար է անցկացրնում : Նախ որ հայ ժողովրդի բոլոր թշւառութիւնների պատճառը «հայոց ազգային Ֆէթիշն» է եղել, այն է՝ «կապիտալիստական Եւրոպայի պաշամունքը» : Երկրորդ շարիքը, ըստ Լէօնի, Ֆիդայական աշխարհալարութիւնն էր : Եթէ Լէօն բոլորովին անաչառ լինէր եւ կանխակալ տրամադրութիւններով չմօտենար խնդիրներին, այս կարեւոր հարցերի շուրջը վերին աստիճանի շահեկան մտքերի փոխանակութիւն տեղի կ'ունենար : Ստեփան, Նորհիւ այն հանգամանքի, որ գերքը տուած է որոշ միջավայրում եւ որոշ միտումներով, ամէն մի փաստ, որ հեռուորագոյն կապ ունի Դաշնակցութեան հետ, Լէօն կողմից արդէն բացասական կերպով է որակւում : Դաշնակցութիւնը մասնակցել է պարսկական ազատագրական շարժումներին, որի դուրսը Եփրեմն է կանգնած եղել, եւ այդ, ըստ Լէօնի, ապացուցանում է, «որ դաշնակցական ինտելիգենցիան ցոյց է տալիս, թէ առանց յեղափոխութեան ինքն ապրել չէ կարող, թէ նրան հարկաւոր է յեղափոխութիւնը ո՞ւր եւ ի՞նչպէս ուղղում է լինի» : Ուրեմն, այս շարժումը մի արկածախնդրութիւն է, «առանց որոշ նպատակի, հենց այնպէս, յեղափոխութիւն կատարած լինելու համար» : 1906 թիւն, օգուելով համեմատաբար ազատ քաղաքական կարգերից, գաղափար է յղացւում հրաւիրելու Ռուսահայոց կենդրոնական ժողով (սահմանադիր ժողով) կարգադրելու ազգային կուլտուրական խնդիրները ուսմանարական ոգով : Էջմիածնում մըն էր ժողովը հրաւիրւած այն պատճառով, որ Էջմիածինն էր մինչեւ այդ իրաւական տէրը ազգային գալուցական-կարածական խնդիրներին : Ժողովում իշխում էր բարձր տրամադրութիւն եւ կովկասահայ մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները պատգամաւոր էին ընտրւած : Բնականաբար տեղի է ունենում մտքերի ուժեղ փոխանակութիւն ազգային հասարակական գանազան խնդիրներին շուրջը : Ժողովի նախագահն էր Ս. Զաւարեանը, ղեպի որը բացառիկ պատկառանք էին տաճում բոլոր պատգամաւորները եւ որի նախագահելու կարողութիւնը անյիճելիօրէն հանդէս եկաւ : Լէօն եւս պատգամաւոր էր ընտրւած Ղարսի շրջանից : Այժմ Լէօն այդ ժողովը անւանում է «մի ներկայացուցչական կատակերգութիւն, որ ամբողջովին Դաշնակցութեան գործն էր» : «Նորաթուխ դաշնակցական սոցիալիստները մի հին վանքում, եպիսկոպոսների եւ վարցական սոցիալիստները մի հին վանքում, եպիսկոպոսները եւ վարցական սոցիալիստները մի հին վանքում եւ ղեկավարութեամբ, ուղղում էին

իրականացնել սոցիալիստական դրախտը: Ահա ինչն էր ծաղրական դարձնում այդ ամբողջ ձեռնարկութիւնը»: «Սոցիալիստական դրախտ» բառերը Լէօն գործ է անում այն պատճառով, որ ժողովում որոշել էր «համարել եկեղեցական - վանքական կալածանքը սոցիալիզացայի ենթարկւած ազգային սեփականութիւն»:

Թիւրքիայում Դաշնակցութիւնը, ըստ Լէօնի, կուսակցական «եսամոլութիւն»-ից զրոգւած ցանկանում է իրեն համար «արտօնւած դիրք ստեղծել»: Դրա համար միանում է Երիտասարդ թուրքերին: «Թիւրքիայում այդպիսի մի արտօնւած դիրք ստեղծելը նրա համար շատ կարեւոր էր, նախեւառաջ ի նկատի ունենալով այն տաղնապն ու անբոբը, որոնց ենթարկւած էր կուսակցութիւնը Ռուսաստանում»: Նման լիակատար «օրիեկտիւ» դատողութիւններ անելով Լէօն մատնանշում է, որ 1914 թւի դարնան գլուխ է գալիս Տաճկահայաստանի բարենորոգումների հարցը, որով նշանակւում էին երկու եւրոպացի մարզպաններ, «որոնք պիտի հսկէին օրէնքների գործադրութեան վրա հայկական վիլայէթներում»: Այս բարենորոգումները գլուխ բերելու մէջ Դաշնակցութիւնը ակտիւ մասնակցութիւն է ունցել: Եւ ահա Լէօն այս ակտիւ մասնակցութիւն բերելու դրդապատճառը մի ազգային կուսակցութեան համար համարում է այն, որ նա «ամբարտաւան մեծամտութեան էր» հասել եւ կարծում էր «թէ ինքը հայոց ազգն է ներկայացնում, եթէ ոչ ամբողջը, գէթ նրա 99 տոկոսը»: Եւ մեր պատմագիրն աւելացնում է, իբրեւ իրականութեան հարադատ բացատրութիւն, որ «իր մասին այդպիսի կարծիք ունեցող կուսակցութիւնը, ի հարկէ, չէր կարող թոյլ տալ, որ հայոց հարցը լուծում ստանայ առանց իր եռանդուն մասնակցութեան»: Ուրեմն, ըստ այս տեսակէտի, միայն եսամոլական մոլորանքով են մասնակցել դաշնակցականները «չառ գործօն» կերպով բարենորոգումների ծանր խնդրին, որպէսզի չլինի թէ առանց իրենց այդ կարեւոր խնդիրը վճուի: Այսպէս է գրւում ժամանակակից պատմութիւնը մի գաւանափոխ պատմաբանի կողմից եւ այդ սպառնալի սերնդին իբրեւ պատմական ճշմարտութիւն, իբրեւ «քննական, վերլուծական յիշողութիւններ» աւանդւում:

Ամենից ենթակայական վերաբերմունք հանդէս է բերում Լէօն գրքի վերջին գլխում («Սորհրդայնացում», էջ 457-477): Վայելելով հայ գրողների հետ «ոտղմական կոմմունայի բոլոր արտօնութիւնները», Լէօն նկարագրում է, թէ ինչպիսի հերոսութեամբ «հիւսիսից ձիւնները պատռելով, քաղցն ու ծարաւը մոռացած՝ ուսու գինւորն է շտապում նրան (այսինքն հայ ժողովրդին), այդ նորից եւ նորից տառապանքի մատնւած ժողովրդի ծէկները պատասպարելու,

պաշտպանելու համար» : Եւ ահա ստեղծագործական կազմակերպչական եռուն աշխատանքների ընթացքում , «հայ կոմմունիստների կարկառուն ղեմքերից մէկը՝ Պողոս Մակինցեանը» հայ գրողների առաջին երեկոյթում յայտնում է , «որ հայ գրողները մինչեւ այժմ եղել են հայ բուրժուազիայի ծաղրածուները , նրանց զարճացնողները , այսուհետեւ պիտի դառնան անկախ եւ պատուաւոր աշխատողներ եւ նրանց կատարած գործը պետական գործ կը լինի» : Թէ հայ գրողը կամ առհասարակ որևէ գրող նման միջավայրում ինչքա՞ն անկախ կարող է լինել , միտաբանակ «պետական գործ» կարող է կատարել , գրա մասին լրջօրէն խօսել այստեղ միանգամայն աւելորդ է :

Եթէ հարցը դրելու լինի , թէ ո՞րն է Լէօնի իսկական արժէքը իրրես պատմագրի , պիտի ասենք հետեւեալը : Եթէ բարձր իմաստով բմբռնեալ պատմագրիտական աշխատողներից պահանջուած է ուսումնասիրութեան մեթոդներով , ուսումնասիրելիք նիւթով , յարուցեալ խնդիրների արժէքով ու լուծումով ինքնուրոյնութիւն , նորութիւն հանդէս բերել եւ իւր տեղը գրաւել պատմագրիտական ընտանիքում – ապա Լէօն նման տիպի մտաւոր աշխատողներից չէ : Սակայն , շրտորհիւ իւր անդուլ ջանասիրութեան , գէպի պատմական խնդիրներն ունեցած իւր անչէջ հետաքրքրութեան , նա կարողացել է , առաջադիմական տեսակէաներով ղեկավարել , հայ պատմական կեանքի բազմապիսի դրւագներ հետազօտել եւ ժողովրդական ոճով մատչելի դարձնել հայութեան ընդարձակ խաւերին : Իսկ զա մեղ պէս մի ազդի համար մի դրական գործ է : Միեւնոյն ժամանակ ունենալով հրապարակախօսի տիպ , նրա գրեածքները եւ այդտեղ արտայայտուած կարծիքները խիստ ենթակայական բնոյթ են կրում : Այդ պատճառով էլ դրանք չեն կարող յարգանք պարտադրել ու խիստ սրբազրելու կարիք են գզում : Ոճի տեսակէտից նրա գրեածքները չեն ներկայացնում առանձին խնամք :

Ունենալով , սակայն , հրապարակախօսական ոճ , ժողովրդի լայն խաւերի համար Լէօնի գրեածքները առինքնող եւ գրաւիչ բնոյթ են ստանում , թէպէտ կիրթ ճաշակին չեն բաւարարում : Նրա վերջին տարիների գաղափարական բեկումը ո՛չ թէ հոգեկան ներքին զարգացման արդիւնք է , այլ տուրք ժամանակին ու պայմաններին : Ուստի եւ այդ վիճակը հարագատ չէ նրա էութեան : Հասկանալի է , որբմն ,որ այս վիճակի մտաւոր արտադրութիւնները չեն կարող առանձին կարեւորութիւն ներկայացնել իսկական Լէօնի գրական նկարագրի բնորոշման համար :